ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

№ 756

«10» հունիսի 2026թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի,
Շահումյան փողոց 2
☎ (060) 74 34 01
էլ. փոստ՝ info@martuni.am

ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝
ՊԱՐՈՆ ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
(ք. Երևան, ՆՈՐ ՆՈՐՔ, Մոլոդովական 60 0062
ՀՎՀՀ՝ 01091058

Հարգելի՛ պարոն Մկրտչյան.

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի և «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 16.03.2026թ. կնքված N ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/08-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պարտավոր էր 2026թ. ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի կարիքների համար մատակարարել կավագործական վառարան, բրուտագործական հաստոց և ջնարակներ, անգոբաներ: Պայմանագրով ապրանքի մատակարարման վերջնաժամկետ սահմանված է 2026 թվականի մայիսի 12-ը ներառյալ:
Սակայն, Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարում մինչ օրս չի իրականացվել:
Ուստի հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է հաամարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:
Մարտունու համայնքապետարանը 2026թ. հունիսի 10-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը: Տեղեկացնում եմ, որ «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետարանի 900145001484 հաշվեհամարին փոխանցել 27,831 (քսանյոթ հազար ութ հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ՝ որպես տույժ

(Պայմանագիր 6.2 կետի համաձայն), տույժը հաշվարկված է մինչև 09.06.2026թ. ներառյալ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները: Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 354,000 (երեք հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է 531,000 (հինգ հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900145001484) հաշվեհամարին: Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2026թ. հունիսի 17-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 354,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 531,000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվիներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. հունիսի 17-ը ներառյալ ներկայացնել Մարտունու համայնքապետարանի գնումների բաժին, 4-րդ հարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

Կատարող՝ Է. Գրիգորյան
Բաժին՝ Գնումների բաժին
Հեռ. +37477270194